

ԱՆՆԱԿԵՐ



“ԹՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՆԻ ԳԱՆ.” ԳՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԺԶ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՆՈՅՆՄԵՐ 1, 1887

ԹԻԻ 11


ԳՐԱԽՏԱՀԱՒ

Հաւանականապէս աշխարհիս ամենէն գեղեցիկ թռչունք են դրախտահաւները որ կը գտնուին Նոր կուի-նէա կղզին և անոր մերձակայ քանի մը աւելի փոքր կղզեաց մէջ: Մեր առջև եղող պատկերը այնչափ չկրնար ներկայացունել մեզ դրախտահաւին գեղեցկութիւնը, վասն զի չը կրնար ցուցնել մեզ թռչնոյն պայծառափայլ գոյները:

Գրեթէ անկարելի է բերել դրախտահաւը իւր բնագաւառէն, որ է արևադարձի երկիրները, և ուստի շատ քիչ անձինք տեսած են զայն բացի անոնցմէ որ գացած են անոր բուն երկիրը:

Այս թռչունը կը բաժնուի քանի մը տեսակներու, որոցմէջ ամենէն ծանօթն է պատկերին մէջ ցուցուածը և կը կոչուի Զմբուխտ Գրախտահաւ: Մարմինը սարեակէ մը շատ մեծ չէ բայց անկէ մեծ կ'երևի իւր երկայն փետուրներուն համար:

Նայէ պատկերին վրայ և երևակայէ թէ ունի գոյն հեռեկեալ կերպով: Գլուխը և պարանոցին յետակողմը դեղին ոսկւոյ գոյն են, և կոկորդին վրայ և պարանոցին առջևի կողմը՝ ճոխ և փոփոխուող ոսկեգոյն կանաչ, մետաքս



եղած են կանախի կողմէն որ երբեմն կ'ունենան բաց դեղին գոյն, և երբեմն դեղինի և ճերմակի մէջտեղ գոյն մը վրան կարմիր պիտակներով: Նաև կայ զոյգ մը շատ երկայն լերկ փետուր, ինչպէս կը տեսնուի պատկերին մէջ: Արդ, երբ պայծառ գոյներու բոլոր այս գանազանութեամբ, թռչնոյն չորս կողմը կ'առնու կակուղ թաշի երևոյթ, յայտնի է թէ ասանք ամէնքը յոյժ գեղեցիկ պիտի երևցունեն զայն: Ազամ ստուգիւ տեսա՛ւ արդեօք դրախտին մէջ դրախտահաւ կոչուած այս թռչունէն աւելի գեղեցիկ բան մը: Չենք կարող ըսել, բայց եթէ Աստուած թողած է այս մեղաւոր երկրին մէջ այսպիսի գեղեցիկ բաներ, ո՛րք փառաւոր բաներ կրնանք յուսայ տեսնել երկնից մէջ:

ԳՐԱԽՏԱՀԱՒ

կերպաներու նման որոցմէ թերևս տեսած էք որ եթէ մէկկողմէն նայիք կ'երևին կանաչ, և եթէ միւս կողմէն նայիք՝ ոսկեգոյն: Մարմնոյն մնացեալ մասը և պոչը շքեղ մուրթ թխագոյն են բացի կուրծքէն որ է մուրթ ծիրանեգոյն:

Մական բացի բուն պոչէն բաւական թուով լայն և թոյլ փետուրներ

ՄԵՐ ԿՈՅ

Երազ մը տեսայ որ թէ և արթննալուս պէս գիտցայ թէ անկարելի է որ պատահի այնպիսի բան, բայց կը յուսամ թէ օգտակար պիտի ըլլայ ինձ:

Իւր աչաց առջև մեծ մարդ մը երկնից դուռը կայնած էր, և շատ զարնելէն պուռայէն ետքը, ծուռ աչքով նայեցաւ այն հրեշտակին որ դուռը կը

բանար, և բառ, « Ո՛ր է այն ծոյլը որ առջևէս զրկեցի ինձ յարմար տեղ պատրաստելու: Չըլլար որ ինձի պէս մարդ մը դրան առջևը երկար կայնի:» «Բարեկամ», բառ հրեշտակը, « կը սխալիս: Պատիւ կը փնտռես, իսկ պատուաւոր չկայ յերկինս բացի Գառնուկէն: Ինչպէս որ յերկրի չկայ իշխանութիւն մը որ Աստուծմէ չըլլայ նոյն պէս ալ յերկինս չկայ պատիւ մը որ Աստուծմէ չըլլայ:»

Քանի որ գայս կ'ըներ տեսայ խումբ մը փոքր հրեշտակներ որ շատ կը ջանային իրենց խնդար զսպել: Թեւերն իրենց երեսներուն առջև կը բանային և իրարու կը նայէին ժպտելով մինև որ դռնապանը դանոնը յանդիմանեց: «Սիրելիք», բառ, «սուրբ խնդում կայ և խնդալու յարմար առիթ, բայց վայելուչ չէ ուրիշներուն վրայ ծիծաղիլ:» Անցան գացին շուշանագարը գետափունքը, և հոն այնչափ կը խաղային, կը կայտէին, կը գրորուէին որ հասկըցայ թէ ինչ է Սողոմոնի յիշած խաղալու ժամանակը:

Կորէն խօսակցութեան ձայնը ուշադրութիւնս գրաւեց և մտիկ կ'ընէի: «Բարեկամս», կ'ըսէ հրեշտակը, «ինչո՞ւ հոս եկար:» «Ի՞նչ կ'ըսես: Բոլոր տիեզերաց մէջ զեղեցկագոյն տեղը չէ՞ այս: Ուրիշ ո՞ր յարմար տեղ կայ այն պիտի մարդու մը որ ինձի չափ բան սորված է աստեղագիտութեան վրայ:» «Աստեղագիտութիւն չկայ յերկինս:» «Հապա—» «Այն որ ամէն մարդ առանց ջանքի ջուրի պէս գիտէ (կամ լաւ ևս էր ըսել, կ'զգայ) ի՞նչպէս կրնան գիտութիւն սեպել: Գիտութիւնը խափաներ է:» «Վայ ինձ: Իմ կէս կեանքըս կորուսեր եմ:» «Այեցիր, կեցիր: Չխորհած կը խօսիս: Գիտութիւն ստանանն օգտակար է եթէ մեզ սորվեցնէ յարատեւութիւն և որոշումն: Ասոնք մնայուն են: Երկինքն անգամ պէտք են: Սատանայ յարատեւութիւն չունենալուն պատճառաւ մեզմէ զատուեցաւ: Թերևս քու ուսմունքդ բոլորովին պարապ պիտի չելլեն: Սէր կայ սրտիդ մէջ:» «Քսան ու հինգ հազար դիրք գոյ ըրած եմ և ամէնքն ալ սիրոյ վերաբերեալ:» «Քանի մը չգար: Սէր կայ սրտիդ մէջ:» «Ինչո՞ւ չէ:» «Ինչ կ'ուզես ընել փրկելիդ համար:» «Ինչ որ պատշաճ է: Թերևս անոր համար մեծ բեմ մը շինել տամ շուկան և հոն ատենախօսութիւն ընեմ անոր վրայով որ ամէն մարդ լսէ և զարմանայ:» «Ո՛րք ընելդ ֆրիստոսֆիաւքին համար կ'ըլլայ թէ քու փառքիդ:»

Հիմա վերջապէս շատախօսը լռեց և հրեշտակը ծանր կերպով բառ, «Անուշտ երկինք հպարտ եղողներուն համար չէ: Գնա: Բաւական գիտութիւն կայ դժոխքը: Հոն է բաժինդ:»

«Արթնցայ, բայց գիրքերս ինձի խորթ կու գային և ամէն կողքէն պղպտիկ հրապուրիչ երես մը տեսայ որ կ'ըսէր, «Հոս հրամէ: Գիտութիւն կայ հոս:» Բայց ես ըսի, «Ետիս գնա, Սա-

տանայ:» Եւ նորէն արթնցայ և նորէն տեսայ թէ երազ է, բայց միտքս մընաց այն խրատը թէ գիտութիւնը աշխարհի և դժոխքի համար է, այլ սէրը երկինց համար: Մ. Փ. Թ.

Մարգուտն, Յունիս 2, 1887:

ՍՐ. ԲԱՐՈՂՈՂԱՄԵՆՈՒ ԿՈՏՈՐԱԾԸ
Սր. Բարդողիմէտի կոտորածը պատահեցաւ 1572, Օգոստ. 24ին, և էր աշխարհիս մէջ գործուած ամենէն սոսկալի և ամօթապարտ ոճիրներէն

հաշուէ ըլլալ 2,000 է մինչև 100,000: Բայց անկողմնակալ մատենագիրը կը կարծեն թէ 20,000 ը մօտ է ճշմարտութեան: Կարողութեամբ մեռաւ յիշեալ կոտորածէն 21 ամիս ետքը, մտքի և մարմնոյ մեծ տաղնապներու մէջ, հաւանականապէս թունաւորուելով իւր մօրմէն: Կիզի Դուքսն սպաննուեցաւ քանի մը ատրի ետքը: «Ամէն սուր առնպէները սրով պիտի կորսուին:»

Սրտաշարժ շատ պատմութիւններ



ՍՐ. ԲԱՐՈՂՈՂԱՄԵՆՈՒ ԿՈՏՈՐԱԾԸ

մին: Գաղիոյ այն ժամանակի թագաւորը, Կարողութեամբ, ստորագրեց հրովարտակ մը որ կը հրամայէր սպաննել Գաղիոյ մէջ գտնուող բոլոր Բողոքականները, և ընդհանուր կոտորածն սկսաւ նախ սպաննելով զԾովակալ Գոլիթի, Բողոքականաց զլուխը: Թագաւորին այսպիսի հրովարտակ մը կրնաքելու մասին պէտք է ըսել որ զնա համոզած էին թէ Բողոքականք դաւ կը նիւթէին անոր կեանքին դէմ, և թէ կոտորածին հրամանը տրուելէն ետքը, թագաւորն ուզեց ետ առնուլ զայն բայց կարող չեղաւ: Թագաւորին մայրը, Գաթմարին սը Մէտիչի, և Կիզի Դուքսն էին բուն հեղինակը այն ոճիրն: Սպաննեալ Բողոքականաց թիւը կը

կ'ըսուին Բողոքականաց այս առթիւ Անգղիա և Գերմանիա փախչելուն վրայ: Գաղիոյ քանի մը գաւառներուն մէջ տեղական կառավարութիւնք մերժեցին հնազանդիլ սրբունի հրամանին, խնայեցին Բողոքականաց և չմեռցուցին զանոնք: Պատիւն պալատին մէջ «Չքեզ Աստուած» սկզբնաւորութիւնն ունեցող շնորհակալութեան երգը երգուեցաւ սունխմարելու համար կաթողիկներուն այն յաղթանակը, բայց չթուիր թէ այս կոտորածն եղաւ Պատիւն թերադրութեամբը:

Սյակիսի կոտորած անկարելի պիտի ըլլար ներկայ գարուն մէջ: Մինչև անգամ եթէ կենային եկեղեցականներ կամ իշխանք այդպիսի բան մը ուզե-



լու չափ չար, ժողովուրդը պիտի չթողուր անոնց ի գործ դնել իրենց նպատակը :

ՔԻՉ ՄՆԱՑ ՈՐ ՃԱՇԷՐ

Հոս դրուած պատկերը տեսողը կը հասկնայ դիւրաւ թէ ինչ է այն : Աղունէան իւր քօրաւոր հոտառութեամբ իմացած էր թէ ուր թառած կը գրանուէին համեղ թռչուններու երամ մը, և անձայն զգուշութեամբ կոխելով գետինը կամացուկ կամացուկ անոնց մօտ եկած էր, և իրեն այնպէս կը թուէր թէ արդէն կը վայելէր համադամ կե-

ԱՂԱՒԵՍ ՈՐ ԹՈՇՈՒՆՆԵՐԸ

րակուրը՝ ձեռք անցունելով այն գիւրուկ թռչուններէն մին : Բայց ճիշդ այն ատեն որ կը պատրաստուէր անոնց վրայ ցատկել, ահա յանկարծ կտորելով ծառէն ոտտ մը կամ տերեւի մը ձայնէն արթնցան իւր առջև դտնուող թռչունները և թռան մէկդի, թողլով աղուէսը յուսակտուր և անօթի : Հանենք ասկէ երեք համառօտ դասեր, երկու հաս աղուէսին տեսակէտէն և մէկ թռչուններուն տեսակէտէն :

1. Հատ անդամ ի դերեւ կ'ելլէ մեր յոյսը երբ յաջողութիւնը կ'երևի ըս-

տոյգ : Փոքրիկ տղայ մը կը շինէ տուն փայտի կտորներէ, և ճիշդ այն ատեն որ պիտի դնէ վերջին կտորը և պիտի աղաղակէ «Մայրիկ, տես ի՞նչ տուն շինեցի», անոր հիմերէն մէկը կը խափտի, և ամբողջ տունը կը փլչի կատի : Եւ ճիշդ այսպէս են չափահաս անձանց շատ գործերը : Թերեւս աղուէսը այնպէս փստահ էր թէ ձեռք պիտի բերէր իւր որոջ՝ որ վերջերքից մը անհող գտնուեցաւ անոր համար : Պարտիւք հող տանել որ չուտով չթուլնաւք ջանքի մէջ : Տղաք, մի սկըսիք անհողութիւն ընել ձեր դասե-

րուն երբ ձեր գիրքին վերջերուն կը մտնենք կամ երբ մտ է արձակուրդը: Ամէն դործի յաճողութեան օրէնքը երկնից թագաւորութիւնը մտնելու յաճողութեան օրէնքն է. «Ով որ մինչև վերջը համբերէ, անիկա պիտի ապրի»:

2. Եթէ ազուէն ըլլար իմաստուն, կրնար մտիմտել ինքզինք խորհելով թէ իւր կորուստն եղաւ թռչնոյն շահ: Երբ տեսաւ թռչնոյն թռչելը՝ կրնար ըսել. «Դուն ըստիր, գէր, թռչուն ես, և չունիմ տարակոյս թէ ուրախ զուարթ կ'ապրիս: Ինչ փախչելուդ համար ճիշդ այնչափ ուրախ ես՝ որչափ ես արտամտեմ քեզ կորսնցունելու համար»: Ազուէսը կրնայ սա մտածութիւնն ևս ընել թէ փախչող թռչունը պիտի երթայ և յարուցանէ ձագեր, և թերեւս յետոյ երկու կամ երեք ճաշեր պիտի ընէ փոխանակ մէկի: Մենք ալ այսպէս պայծառ կողմը նայինք անհաճոյ դիպաց մէջ: Երբ մեր յոյսը պարապ կ'ելլէ, երբեմն շատ պատուական դասեր կը գտնենք անոր մէջ:

3. Թռչունները և մասնաւորապէս այն որ հազիւ ազատուեցաւ ազուէսին ճանկերէն, պէտք էր զգային թէ իրենց ապահովութիւնը կը կայանայ միշտ արթուն և զգուշաւոր ըլլալուն մէջ: Շատ ապահով և խաղաղ տեղ կ'երևէր թուփերուն ներքեւ, բայց թռչուններուն ամենէն վտանգաւոր թռչնամին մօտիկն էր: Եւ, տղայք, կայ խորամանկ և ճարտար թռչնամի մը որ պատրաստ է նետուիլ ձեր վրայ և կորսնցունել ձեր հոգիները, և նա աւելի վտանգաւոր է, վասն զի թէպէտ գայլ է սակայն ոչխարի հանդերձով կը մօտենայ: Զգուշացէք անկէ:

ՈՍԿԻ ՄԻՏԱԼԸ

Բնաւ պիտի չմտնամ դասը զոր առի երբ դպրոց կ'երթայի: Կը տեսնէինք աշակերտաց մէջ Ուաթարն առնուն տղայ մը որ կովմը կը տանէր արօտը: Երեկոյին տղան կովը դարձեալ ետ կը բերէր, բայց չէինք գիտեր թէ ո՛ւր, և այսպէս ըրաւ շարունակ քանի մը շաբաթ: Այն դպրոցը գացողները զրեթէ ամէնքն ալ հարուստ ծնողաց որդիք էին, և անոնցմէ ոմանք որ բաւական անմիտ էին, արհամարհանօք կրնայէին այն աշակերտին վրայ որ պէտք ունէր կով վարելու:

Ուաթարն սիրելի և ազնիւ բնաւորութեամբ կը տանէր զինք նեղերու համար անոնց ըրած բոլոր ջանից:

«Ուաթարն», ըսաւ օր մը ճէքարն անուն ուրիշ տղայ մը, «հայրդ միտք ունի քեզ կաթնավաճառ ընել»: «Ինչո՞ւ չէ», ըսաւ Ուաթարն: «Բայց չըլլայ որ շատ ջուր խառնես կաթին մէջ», պատասխանեց միւսը:

Տղաքը ծիծաղեցան, և Ուաթարն երբէք չվիրաւորուելով, ըսաւ, «Բնաւ մի վախնաք, եթէ ես երբէք ըլլամ կաթնավաճառ, պիտի ծախեմ ըման չափով և ընտիր կաթ»:

Այս խօսակցութեան յաջորդ օրը տեղի ունեցաւ հրապարակաւ քննութիւն, երբ մերձակայ քաղաքներէն տիկնայք և պարոնայք ներկայ գրանուեցան և մեր դպրոցին վերատեսուչը մրցանակներ բաշխեց. և թէ՛ Ուաթարն և թէ՛ ճէքարն բաւական լաթիւ առին, վասն զի իբրև ուսանող անոնք զրեթէ հաւասար էին: Մրցանակաց բաշխման արարողութենէն ետքը վերատեսուչն ըսաւ թէ մրցանակ մը կար արուելիք որ էր ոսկի միտալ և որ քիչ անդամ արուած էր, ոչ վասն զի մեծ արժէք ունի, այլ վասն զի զայն տարու առիթ եղող դէպքերը հազուադիւրս էին: Այս էր դիւցազնութեան մրցանակ: Վերջին միտալը արուեցաւ երեք տարի առաջ առաջին կարգէն տղու մը որ խեղդուելէ ազատեց խեղճ աղջիկ մը:

Այնուհետեւ ըսաւ վերատեսուչը, Եթէ հանդիսականք թոյլ կու տան, կարճ պատմութիւն մը պիտի ընեմ:

Շատ չընեմ, քանի մը տղաք թրուուցիկ կը թուցունէին փողոցին մէջ և ճիշդ այն ատեն խեղճ պատանի մը ձի հեծած անկէ կ'անցնէր կ'երթար աղօրիք: Չին վախնալով խրատեցաւ և նետեց տղան կռակէն վար, և ասկէ տղան չարաչար վիրաւորուելով տարուեցաւ տուն և քանի մը շաբաթ անկողին պառկեցաւ: Ոչ մին այն տղոցմէն որ առանց գիտնալու պատճառ եղած էին այն արկածին, հոգ չըրաւ երթալ հասկնալ թէ ինչ եղաւ վիրաւորեալ այն տղան: Բայց գտնուեցաւ տղայ մը որ հեռուանց տեսած էր այն պատահարը և որ ոչ միայն գնաց հարցփորձ ընել անոր վրայով, այլ կեցաւ հին օդնել անոր:

Այս տղան չուտով իմացաւ թէ վիրաւորուած տղան ունէր աղքատ այրի մամ մը որոյ ապրուստին միակ միջոցն էր իւր կովուն կաթին ծախուելէն գոյացած ստակը: Կինը ծեր էր և կարող չէր քալել, և իւր թողուրուն միայն ապաւինած էր տանել կովը արօտ, հիմա չէր կրնար օգնել ա-

նոր քանզի ջախջախուած էր անոր մարմնոյն մէկ կողմը: «Հոգ մի ընեմ, բարի տիկին, ըսաւ այս տղան, ես պիտի տանիմ կովն արածել»:

Բայց անոր մարդասիրութիւնը բաւական չտեսնեց այսչափը: Ստակ պէտք էր գեղադործին տարու համար: «Ես ունիմ ստակ, մայրս զրկած է ինձ զայն զոյգ մը կօշիկ գնելու համար», ըսաւ, «բայց ժամանակ մը կրնամ ըլլալ առանց նոր մը գնելու»: «Ոչ, ոչ», ըսաւ ծերունի կինը, «ես չեմ կրնար հաւանիլ ատոր, բայց ահա հոս կայ զոյգ մը թանձր կօշիկ զորս գնեցի թովմասի համար, և նա չկրնար հագնիլ զանոնք: Եթէ միայն կրնաս գնել զանոնք, անոր ստակը կրնայ լեցունել մեր պէտքը»: Տղան գնեց կօշիկները թէպէտ կոշտ բաներ էին անոնք, և մինչև հիմա կը հագնի զանոնք:

Երբ դպրոցին միւս տղաքը հասկցան թէ մեր այն աշակերտը առաւօտ և երեկոյ սովորութիւն ըրած էր կովը տանել արօտ և բերել անկէ տուն, ամէն օր կը ծիծաղէին անոր վրայ և կը ծաղրէին զնա: Մասնաւորապէս անոր ստորին աստիճանի կաշիէ կօշիկները ծիծաղելու նիւթ եղած էր անոնց: Բայց տղան ամէն օր կը շարունակէր իւր ընթացքը զուարթութեամբ և քաջութեամբ, բնաւ չզգուշանալով աչքի երևելէ, տանելով և բերելով այրի կնոջ կովը և հագնելով իւր կոշտ կօշիկները: Բնաւ մէկուն բան մը չըսաւ թէ ինչու համար կը տանէր կը բերէր կովը, վասն զի չէր ուզեր պարծել իւր մարդասիրական շարժառիթներուն վրայ: Իւր վարժապետը լոկ դիպուածով իմացաւ անոր մարդասիրութիւնը և անձնուրացութիւնը:

Եւ հիմա, տիկնայք և տեարք, կը հարցնեմ ձեզ, ո՞չ ապաքէն ճշմարիտ դիւցազնութիւն կար այն տղուն այս ընթացքին մէջ: Ոչ, Պարոն Ուաթարն, մի մտնեմ ծածկուիլ սե տախտակին ետեւ: Դուն չվախցար ծաղրուելէ, և պէտք չէ որ վախնաս դովեստ ըսելէ:

Երբ Ուաթարն, շառաւոյն այտերով յառաջ եկաւ, բոլոր հանդիսականաց դէմքին վրայ կ'երևէր նշան զմայման, և միտալը տրուեցաւ անոր՝ անոնց եռանդուն ծափահարութեանց մէջ:

Ամերիկայի Միացեալ Նահանգացի Դրամութեան Կոմիտէ, Արտօնատէր Տ. Ք. ԿԻՒՆ
 Տնօրէն Քլայմընթ Է. Ս. ՊԱՐՆԵՍ
 Ֆինանսական Կոմիտէ, Ամերիկայի Բանկ
 ԿՈՄԻՏԵՆ ԳՆՈՒՊՈՒՄ
 1 ՏՊԱՐԱՅԻ Ա. ՅԱՌՈՐ ՊՅՅԱՅԱՆՔ